

բախտս բերանը լուծեան կնքով փակուեցաւ. քո հասակի ամառնային ջերմութիւնը ձմեռային սառնամանեօք ոստաքանց՝ եղև, որով քո Աստուածասէր Հայրը, քո սիրասուն եղբարքը, քո սիրելի Ամուսինը, քո քոյրերը և բոլոր քեզ ծանօթ ժողովուրդը արտասուաց մէջ ընկղմած մնացին: Եւ այն արտասուեցրո զոր ընծութեան օրէնքը վըճուել էր քեզ քո ծնողացը մատուցանել, ծանր է մեզ ամենեցուն տեսանել, որ քո ծերունագարդ Հայրը դառնակակիծ մորմոքիւ քո գագաղի վերայ է թափում:

Բայց ի՞նչի համար մեր այսպիսի տխուր դիպուածոց մէջ կտրատում եմք մեր քրիստոնեական սուրբ յուսոյ սամետիքը: Աշխարհի Փրկիչն արդէն մեր մէջն է, ըստ որում մեր յանուն Նորա եմք ժողովեալք սուրբ տաճարիս մէջ: Յիշեմք Նորա Աստուածեղէն խօսքը, թէ ինչ որ խնդրեմք հաւատով՝ նա կտայ մեզ:

Բայց եթէ այսու կենօք միայն յուսացեալ եմք ի Նա, ողորմելի եմք քան զամենայն մարդիկ: Ես ինքնին ի հաւատոյս խոտովանիմ, թէ նային քաղաքի պատանւոյն հրաշագործող կենսատու Փրկիչն մեր մէջ է, և այժմ՝ ևս հանգուցելոյս կանչում է քեզ ասեմ արի: Արի, ի մահուանէ ի կեանս, արի ի կարծօրեայ կենաց ի յաւիտեանականս, արի յառօրէիցս յանանգականս՝ արի յապականացու կենցաղոյս յանապականս, կարճեմք ուրեմն մեր աղիողորմ հառաչանքը և չափաւորեմք մեր յուսակտուր արտասուքը: Աստուածային է անսուտ պատգամս, «Որ հաւատայ յիս, ընդունի զկեանս յաւիտեանականս», «Ուրեմն Սա չէ մեռալ, այլ ննջէ:

ՅԱԿՈԲ ԱԽԱԴ ՔԱՀԱՆԱՅ ՍՈՒՐԵՆԵԱՆՅ

Ի 5 Յ-ՆԷ-Է 1876 թ.

Մասկայ:

Ի ԲԱՔՈՒ ՔԱՂԱՔԷ.

Մշակի 20-րդ թուոյն մէջ պատահեցի նաև մի յօդուածի, «Դեռ զրել սովորեցէք» վերնագրով: Այդ վերնագիրը շատ պատուական վեր-

նագիր լինելով՝ ես կարծեցի թէ՛ Մշակը սկսել է ճանաչել իւր պարտաւորութիւնները և վերադարձել է դէպ ի իւր ուղղութիւնը, որն որ քանի ժամանակից ի վեր կորցրել է նորա: Կարծեցի թէ՛ սկսել է՝ եղբայրարար սիրով՝ յորդորել երիտասարդաց աշխատելի զրել սովորել և յն: Ուստի և կարծեցի թէ՛ այդ յօդուածը ևս «վերադառնանք», հետ միասին պիտի շուտով թարգմանուի Գերմանական աւետարանական «Evangelisches Sonntagsblatt», շաբաթաթերթի մէջ՝ իբրեւ մի իմաստալից առաջնորդող յօդուած:

Բայց փոքր ինչ կարգալ շարունակելով տեսի, որ չէ: Մշակը դեռ միևնոյնն է, նա դեռ իւր կրքերի գերին է, նա այդ վերնագրով էլի սկսել է իւրեան գովել, ցոյց տալով՝ որ ոչ ոք զրել չգիտէ բաց ի Մշակից, ուրեմն ամենին հարկաւոր է դեռ զրել սովորել, բայց Մշակին ոչ, որովհետև նա ինքն «տէտէ է չաւրանել, յան է եկել շահաւորութեան, անցել է եւրոպայ, ծնացել է այն տեղ, ուստի՝ չաւրանել է, և լին և լին, «Ուրեմն ամենայն բան զիտէ:

Զարմանալի է, որ մեր ուսումնական կոչուած երիտասարդներից շատերը՝ Եւրոպայ, համալսարան, բարձր ուսումնարան բառերով ցանկանում են ազգի աչքերը կապել իւրեանց լուսաւոր ոմն քարոզելով, կարծես թէ ազգը խօսքերով պիտի խաբուի և ոչ գործերը կշռելով՝ ճշմարտութեան հետևի: Անցան այն ժամանակները, որ մեզանից շատերը կարծում էին թէ Եւրոպայում ամենևին չկան այժմ փորձով հասկացել են և տեսել, որ ամենայն տեղ մի և նոյն են թէ Եւրոպայում և թէ համալսարաններում: Եւ լին և լին *):

Եթէ այսպէս չէ, միթէ զարմանանալի չէ՞ որ մեր ամենայն բան հասկացող Մշակը, այսօր երկու ամենահեշտ խօսքի նշանակութեան համար մնացել է տարակուսանաց մէջ, և փոխանակ յանձնառու լինելոյ՝ որ ինքն շատ թոյլ է հայկաբա-

(*) Այս ասելով չկարծէք թէ անարդուամբ դիտութիւնը եւ իմաստութիւնը, այլ չէմ սիրում տեսնել ճշմարտութեան անունով ստուգութիւնը, լոյսի անունով խաւարը, արդարութեան անունով մեղքը թաղաւորում:

նութեան մէջ, այլոց քարոզումէ զրել սովորել, ուրիմն, եթէ այսպէս է, շատ լաւ կլինէր Մշակի համար նախ առնել՝ և ապա ուսուցանել:

Բայց ես կարծումեմ, եթէ Մշակը՝ հեղինակի ամբողջ խօսքը դուրս բերած լինէր իւր յօդուածի՝ մէջ չէր ընկնիլ այնքան տարակուսութեան մէջ, այլ պարզ կհասկանար նա խօսքի միտքը, ինչպէս. — «Մարդը պիտի անշուշտ ունենայ մի հաւատ, իսկ այն մարդիկը որք հպարտութեամբ չեն ընդունում ո՛չ մի հաւատ, ո՛չ մի կրօն, ուստի նոքա ընդունումեն հաւատով անհրձեռնութիւնը, իսկ ազգաւ եւսնութիւնը, և ընդ որ ցանկանումէ այդպիսի տիտղոսի՝ թող առաջ գայ և յայտարարութեամբ ասէ՝ ես հաւատով անհրձեռնութիւն և ազգաւ եւսնութիւն, Պարզ է հասկանալի է՞ թէ ոչ, թող ընթերցողք վճռեն. բայց որովհետեւ կրքերի թագաւորութիւնը թող չէ տուել Մշակին այդ խօսքը ամբողջաբար գրելով հանել հասարակաց դատաստան, այլ միմիայն հաւատով անհրձեռնութիւն և ազգաւ եւսնութիւն բառերը գրելով՝ ցանկացել է շփոթել ընթերցողների միտքը, անհասկանալի քարոզել դոցա, որ թերեւս ի պատճառս դորա կարողանայ իւր արդէն ժողովուած կրքերի պատմութիւնը նկարագրելով՝ մեր տօնելի հոգևորականաց ազգի առաջն պահարակեր նոցա տգէտ՝ անարդ քարոզել, հոգևորականութեան վարկը կոտրել նոցա եզրիտութեան հետ համեմատել, նոցա բարին չար քարոզել, ազգասիրութիւնը ազգատեցութիւն, անձնազոհութիւնը անձնասիրութիւն, միամիտ երիտասարդներին մոլորացնելով՝ ազգի մէջ երկպառակութեան ոգի մշտցնել, հոգևորականութիւնը աշխարհականներից բաժին բաժին անել՝ և իւր այդ արարմունքը նոցա վերայ դարսել, միով բանիւ հոգևորականաց՝ աշխարհականաց առջն ատելի կացուցանելով՝ աշխատի նոցա մէջ սիրոյ և հոգևոր միութեան թիւն կտրել, որ թերեւս կարողանայ իւր մտադրուած նպատակները կատարել և իւր խօստմունքը պսակել: Եթէ իւրաքանչիւր տարւոյ մէջ՝ մեր ազգում՝ այսպիսի իմաստունք քիչ են եղած:

Ենք համոզումներ, որ ինչպէս ասումէ Մշակը, շատ կարելի է չհասկացած էլ լինի այդ

երկու պարզ խօսքերի նշանակութիւնը, որովհետեւ իւր սուտմն ստանալով Եւրոպայի շատ կարելի է թողել է այն տեղ իւր մայրենի լեզուն և կրօնը, ուստի կպարտաւորուիմ աւելի պարզ և աւելի հասկանալի ոճով բացատրել մի և նոյն խօսքերի նշանակութիւնը, այսպէս. — Լուսնի անհրձեռնութիւնը ասելով իմացվումէ, որ մարդը, որովհետեւ անշուշտ պիտի ունենայ մի հաւատ, որոյ մասին շատերից շատ տեղիք խօսուած է. իսկ այն մարդիկը, որք հպարտութեամբ չեն ընդունում ո՛չ մի հաւատ, և ո՛չ մի կրօն, ուրիմն նոքա ընդունումեն ո՛չ Աստուծոյ և ո՛չ Աստուածայնոց լինելութիւնը և ո՛չ յուսացած բաների հաստատութիւնը, որ ահա այս ասվում է անհրձեռնութիւն: Այսպէս դոքա ընդունումեն անհրձեռնութիւնը և անհրձեռնութիւնը դառնումէ դոցա համար մի կերպ նոր կրօն, որ դորա ընդունողները ասումեն անհրձեռնութիւն և անհրձեռնութիւն անելով իմացվումէ, որ կան մի տեսակ մարդիկ՝ որ ասումեն թէ՛ բացի մեզանից աշխարհումս ո՛չ որ չկայ մենք զիտելք ամենը, մենք կրթուել ենք բարձր ուսումնարաններում, մենք լուսաւորուած ենք, իսկ մնացեալները իդէալիստ, քիչ-քիչ, քիչ-քիչ, քիչ-քիչ և քիչ-քիչ, և ըն և ըն Ահա այս տեսակի մարդիկը, որ բացի իւրեանցից ոչ որ չեն հաւատում և եւ ի, եւ ի գոչելով աղաղակներ են հանում, ասվումեն անհրձեռնութիւն, դոքա էլ պատկանումեն անհրձեռնութիւն և անհրձեռնութիւն *):

Յոյս մեծ ունիմ, որ այժմ Մշակը լաւ հասկացաւ այս ամենապարզ գրուածքի նշանակութիւնը և համոզուեց, որ իւրեանք հայերէնագէտ յօդուածագիրները և ընթերցողները շատ լաւ հասկանումեն գրածների և կարգացածների նշանակութիւնը, իսկ չհասկացողն է ինքն միմիայն Մշակը:

Ա Ր Ա Մ.

Ի 20 Յունիս 1876

Ի Բախտ:

(*) Ազգ այստեղ նշանակումէ տեսակ կամ խոսք, եւ ոչ ազգ-հայոց, Ռուսաց, Արշակունեաց եւլն: